

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Ըստ առաջադրանքի պահանջվում է կատարել N71 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ:

Ըստ սեյսմիկ եզրակացության անհրաժեշտ է վերականգնել՝

- ծածկի հավաքովի ե/բ սալերը,
- մուտքի աստիճանները,
- միջնորմները,
- աստիճանային հարթակները,
- մասնաշենքերի միացման հատվածում սյան և արտաքին պանելների միջև կարանների վերականգնում,
- տանիքների վերականգնում,
- մուտքի հովհարների կառուցում:

Ծածկի հավաքովի ե/բ սալերի պաշտպանիչ շերտերը տեղ-տեղ վնասված են, ամրանները բացված են և ժանգոտած: Անհրաժեշտ է մաքրել գոյություն ունեցող ամրանները ժանգից և իրականացնել նոր պաշտպանիչ շերտ: Նայել թերթ ԿԼ-2:

Մասնաշենքեր 1 և 3-ի մուտքի աստիճանները անհավասարաչափ նստվածքների հետևանքով դեֆորմացվել են և պիտանի չեն հետագա շահագործման: Անհրաժեշտ է կառուցել նոր աստիճաններ: Նայել թերթ ԿԼ-2: Մասնաշենքերի միացման կարանները վերականգնել B12.5 դասի բետոնով, ծավալը կազմում է 3,0 մ³:

Միջնորմների վերականգնումը կատարվում է համաձայն ԿԼ-3 գծագրի: Մանր բլոկներով շարվածքը ամրանավորվում է ուղղաձիգ ուղղությամբ Ø8AI ամրաններով 800 մմ քայլով, հորզինական ուղղությամբ՝ Ø8AI ամրաններով 600 մմ քայլով: Միջնորմի և կարկասի միջև անհրաժեշտ է թողնել 20 մմ տարածություն, որը փակվելու է փրփրապլաստով, կառույցի բավարար աշխատանքը ապահովելու նպատակով:

Դեպի լողավազան տանող, 1 և 3 մասնաշենքերի միջանցքներում աստիճանային հարթակները գտնվում են խարխուլված վիճակում: Հարթակի սալի նստվածքի հետևանքով այն քայքայվել է և պիտանի չէ հետագա շահագործման: Վերականգնման համար անհրաժեշտ է քանդել գոյություն ունեցող հարթակը, ապամոնտաժել գոյություն ունեցող աստիճանները, հանել խոնավ գրունտի շերտը, 40 սմ հաստությամբ, լցնել նոր գրունտ, տոփանել, իրականացնել խճային շերտ այնուհետև իրականացնել նոր բետոնե սալ և տեղադրել աստիճանները: Նայել թերթ ԿԼ-4:

Տանիքների վերականգնման համար անհրաժեշտ է ապամոնտաժել գոյություն ունեցող ջրամեկուսիչ, պաշտպանիչ, և խարամի շերտերը: Իրականացնել նոր շերտեր, ստանալով 2% թեթևություն համաձայն ԿԼ-5 - ԿԼ11 գծագրերի:

Գոյություն ունեցող հովհարները անհրաժեշտ է ապամոնտաժել: Իրականացնել նոր հովհարներ, համաձայն ԿԼ-12, ԿԼ13 և ԿԼ-14 գծագրերի: Մետաղական տարրերը ընտրված են համաձայն ГОСТ 8639-82 (կավարամած) և ГОСТ 30245-2003 (կրող տարրեր): Կրող տարրերի եռակցման կարերը իրականացնել 4 մմ հաստությամբ, իսկ կավարամածը եռակցել 1.5 մմ եռակցման կարով: Բոլոր մետաղական տարրերը ներկել հակակոռոզիոն նյութով, 2 շերտ:

ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

N	Անվանում	Ճանաչություն
Կոնստրուկտորական լուծումներ /ԿԼ/		
1	Գծագրերի անվանացանկ և բացատրագիր	ԿԼ-1
2	Ե/բ հավաքովի սալերի վերականգնում: Մուտքի աստիճանների վերականգնում	ԿԼ-2
3	Մանր բլոկներով պատի ֆրագմենտ	ԿԼ-3
4	Ներքին աստիճանների հարթակների վերականգնում: Թեթամուտք	ԿԼ-4
5	Տանիքի հատակագիծ: Մասնաշենք 1	ԿԼ-5
6	Տանիքի հատակագիծ: Մասնաշենք 2	ԿԼ-6
7	Տանիքի հատակագիծ: Մասնաշենք 3	ԿԼ-7
8	Տանիքի հատակագիծ: Մասնաշենք 4	ԿԼ-8
9	Տանիքի հատակագիծ: Մասնաշենք 5	ԿԼ-9
10	Տանիքի հատակագիծ: Մասնաշենք 6	ԿԼ-10
11	Տանիքի հատակագիծ: Մասնաշենք 6	ԿԼ-11
12	Մետաղական հովհար ՄՅ-1	ԿԼ-12
13	Տեսքեր 2 և 3	ԿԼ-13
14	Տարրերի մասնագիր: Հանգույցներ	ԿԼ-14

ՎԿԱՅԱԿՈՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Նշանակում	Անվանում	Ճանաչություն
СП 22.13330.2012	Основания зданий и сооружений	
СП 63.13330.2012	Бетонные и железобетонные конструкции	
СП 20.13330.2011	Нагрузки и воздействия	
ՀՀՇՆ II-6.02-2006	Սեյսմակայուն շինարարություն: Նախագծման նորմեր	
ՀՀՇՆ II-0.00-2006	Քարե և ամրանաքարե կառուցվածքներ. Նախագծման նորմեր	

Երևանի Էրեբունի վարչական շրջանի թիվ 71 մանկապարտեզի վերանորոգում				
Փոխ. Թերթ	N փաստ.	Ստորագր.	Ամսաթ.	
ՆԳՃ	Գ. Պարոնյան			
Նախագծեց	Գ. Պարոնյան			
Ստուգեց	Գ. Իվանյան			
Կոնստրուկտորական լուծումներ				Փուլ
Գծագրերի անվանացանկ, վկայակոչվող փաստաթղթերի տեղակագիր և բացատրագիր				Թերթ
UNU DESIGN				Թերթեր
2014 թ.				ԱՆ
ԿԼ-1				43